

ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻՆ ՆՎԻՐՎԱՆ ՄԻ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԼՆԱ ԱՆԱԶԱՐՅԱՆ

Հայկական սկզբնաղբյուրները գիտության տարբեր բնագավառներին վերաբերող բազմազան տեղեկություններին զուգընթաց արժեքավոր տվյալներ են պարունակում նաև երկրաշարժերի մասին: Դժվար է նշել հայկական որևէ աղբյուր, որում հարևանցիորեն կամ կոնկրետ շխտավեր երկրաշարժի մասին, հաղորդվեր ուղազրավ մանրամասնություններով հազեցված տեղեկություններ: Խնդրո առարկա հարցի առումով աչքի է ընկնում մանավանդ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը, որտեղ կան երկրաշարժերին նվիրված ամբողջական պատկերներ (35, 37), ինչպես նաև առանձին հատվածներ այլ գրություններում: Վերջիններից է 56-րդ գլուխը, որտեղ հայ ժողովրդի ու նրա հանդուժած կարգը խախտվում է և ընդմիջարկվում երկրաշարժերի վերաբերյալ սույլ տեղեկություններով: Այսպես, օրինակ «Թուին» ԶԲ (= 1453) սուլթան Ահմատին էառ զՍտամբուլ ի ձեռաց թագաւորին Յունաց Մանուէլի: Թուին ԶԷ (= 1458) շարժ եղև յնգնկան ԼԻՒ մարգիկ մեռան... Թուին ԶԺԸ (= 1469) մահ անկաւ ամենայն աշխարհ. Նաղաշ վարդապետն զողրն ասաց. Թուին ԶԼԱ (= 1482) մեռաւ սուլթան Մահմատն և նստաւ որդի նորա սուլթան Պայազիթն:

Դարձեալ ի սոյն թուին շարժ եղև յնգնկան, ԼԻ հոգիք ներքև հողին մնացին... և այլն: Երզնկայի երկրաշարժերին վերաբերող հաղորդումներն ուղադրավ են աչքի ընկնող հաճախականությամբ, հանգամանք, որը բերում է այն ենթադրության, թե կամ աչգտեղ երկրաշարժերը սուլթանական երևույթ են եղել, կամ էլ երկրաշարժերի ժամանակագրության հեղինակը ծագումով երզնկացի է: Եվ, իսկապես, սույն ենթադրությունները համապատասխանում են իրականությանը: Վ. Ստեփանյանի կողմած Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած երկրաշարժերի տարեգրությունից պարզ երևում է, որ Երզնկայի մարզը մինչև XVII դ. վերջին երեսնամյակը համարվել է Հայաստանի սեյսմիկական ամենաակտիվ գոտիներից մեկը¹: Ուստի հասկանալի է, որ Երզնկայի շրջաններն ու ժամանակագիրները պետք է նկատեն այս հանգամանքը և որևէ կերպ արձագանքեն դրան: Իսկ որ այդ հաղորդումների հեղինակը ծագումով երզնկացի է, հաստատվեց գտնված մի ձեռագրով, որը ընդօրինակել է ճանաչված գրիչ Ամիրաս Երզնկացին: Աճառյանի անձնանունների բառարանը նշում է Ամիրասի գրչին պատկանող երկու ձեռագիր. Վիեննայում պահվող, 1638—1657 թթ. Տրապիզոնում ընդօրինակված մի ժողովածու և 1655 թ. հունիսի 25-ին նույնպես Տրապիզոնում ավարտված մի Ոսկեփորիկ (վերջինս պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, 278 համարի տակ): Այս երկուսին գումարվում է մեր նշած ձեռագիրը, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 10200 համարի տակ. այն 1963 թ. ձեռք է բերվել Գրիգոր Խալաթյանցի ժառանգներից: Հիշյալ ձեռագիրը պարունակում է մի շարք արժեքավոր նյութեր, որոնցից մեկ համար առանձին հետաքրքրություն են ներկայացնում ժամանակագրություններին հատկացված էջերը, և հատկապես 382ր էջը, որտեղ Երզնկացին գրում է իր հարադատ քաղա-

¹ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցու», Վաղարշապատ, 1896, էջ 629:

² Տե՛ս Վ. Ստեփանյան. Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձագայրում, Երևան, 1964, էջ 66—67, 77—78:

րում՝ Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժերի մասին: Ստորև ներկայացնում ենք ընդամենը մեկ էջ զբաղեցնող այդ ժամանակագրությունը:

«Ի Թվականիս հայոց ՆՂԴ ամին եղև խիստ շարժ և փոխեցաւ գուն լուսաւորացն ի կարմրութիւն և մառախլաւոր ունէր ղերեսս երկրի. և ի շարժէն եկեղեցիք և մեծ շինուածք խախտեցան. և Երզնկան առհասարակ փլօ. և պատահեցաւ գետինն, և եկուլ բազում այրս և կանայս. և շատ ար գայր ձայն անզնդոց: Թվին ՈԺն շարժ եղև Երզնկան, ոչ փլօ: Թվին ՈԺէ շարժ եղև Երզնկան. ԺԲԻ մարդ մեռաւ: Թվին ՉԺէ շարժ եղև Երզնկան. ի յօր կիրակէին. ԺնԻ մարդ մեռաւ: Թվին ՉԼ շարժ եղև Երզնկան. աստուած պահեց, ոչ փլօ: Թվին ՉԼԶ շարժ եղև Երզնկան խիստ ահայգին ի մայիս ամսուն. և բազում մարդիք մեռան, որ ղթին աստուած միայն դիտէ: Թվին ՉԼԲ սասաիկ շարժ եղև Երզնկան, ոչ փլաւ: Թվին ՉՂԴ շարժ եղև Երզնկան, շատ օր լեր]էրեաց ղերթ րպեսն ի մէջ ծովուն, աստուած պահեց. ոչ փլաւ: Թվին ՊԵ շարժ եղև Երզնկան. օրն է՛լ հեղ երէրար, ոչ փլաւ: Թվին ՊԻԳ ղեկտեմբեր Լ, օրն ուրբաթ շարժ եղև Երզնկան. եկաց ժամ մի, կարծէին, թէ այլ ոչ շարժի. կրկին սաստիկ շարժ եղև, պարբսպէն շատ տէղ փլօ: Թվին ՉԶ շարժ եղև Երզնկան. աստուած պահեց, ոչ փլօ: Թվին ՉԺԱ շարժ եղև Երզնկան. ԼԲԻ մարդ մեռօ: Թվին ՈԻԵ նոյեմբեր է՛ ահայգին շարժ եղև Երզնկան. ի մէջ գիշերին մարդ ի շէն չկարաց պառկիլ Դ ամիս, ապա ղաղաքեցօ: Թվին ՌԼԳ ահագին շարժ եղօ յունիս Ժէ օրն լուսաւորչուն. Բ շ[արթ]ի. Գ ժամն օտրն անկարծակի դողումն եղև, քաղաքին ամէնն առհասարակ փլօ. Բ կաշայէն (?) Դ գեղ փլօ, բերթն Պաղաստուն խան ոչ փլօ: ԵՄ ար ու կին մեռան ներքև հողին. ԵՄ մարդ այլ ար ու կին կիսամահ հողուն հանեցին, որն ապրեցաւ, որն շահատ մնաց, որն մեռօ»³:

Նշենք, որ այս բոլոր տվյալները մտել են Ամիրաս Երզնկացու մի շատ արժեքավոր և ընդարձակ ժամանակագրության մեջ, որը հետագայում նյութ է ծառայել Առաքել Դավրիժեցու երկի 56-րդ գլխի համար:

Չնայած հակիրճությանը, վերը բերած ժամանակագրությունում կան տեղեկություններ, որոնք կարող են շատ օգտակար լինել սեյսմոլոգներին: Այստեղ նշանակալից են փոփոխումների և ավերումների նկարագրությունները, նաև փլատակների ներքո կամ ճեղքված գետնի խորքում դժվածների թիվը ցույց տվող տվյալները: Նկատենք, որ երկրաշարժերին վերաբերող հայկական սկզբնաղբյուրները վաղուց են արժանացել սեյսմոլոգների ուշադրությանը: Սակայն գրանք գրված լինելով հին հայերենով, անմատչելի են եղել գիտնականների լայն շրջաններին և մեծ մասամբ դուրս են մնացել նրանց տեսալաշախից: Վերջերս, մեր պատմական աղբյուրների ուսումնական թարգմանությունների լույս ընծայման շնորհիվ ավելի ու ավելի է աճում մասնագետների հետաքրքրությունը դրանց նկատմամբ: Այսպես, Մոսկվայում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Երկրի ֆիզիկայի ինստիտուտում մի խումբ գիտնականներ Ա. Նիկոնովի գլխավորությամբ սկսել են զբաղվել հայկական աղբյուրների տվյալների ուսումնասիրությամբ և նրանց սեյսմոլոգիական մշակումով:

«Известия АН СССР» ամսագրի «Физика земли» սերիայի № 9-ում բնութագրվում է սկսվել Մեծ Կովկասի ամենաուժեղ երկրաշարժի մասին, որը տեղի է ունեցել 1668 թ. հունվարին: Բնութագրվում են թնաքված և տարբեր աղբյուրներ, որոնց շարքում գլխավոր տեղերից մեկը պատկանում է Առաքել Դավրիժեցու տեղեկություններին: Եվ քանի որ այս պատմիչը վաղուց և րատ արժանավույն ձևով է բերել արժանահավատ ժամանակագրի համբավ, որի տվյալները մեծ վստահություն են ներշնչում, ուստի Մոսկվայի սեյսմոլոգներ-

³ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 10200, էջ 382բ:

րը, հիմք ընդունելով այդ տվյալները, կարևոր ճշգրտումներ են կատարել իրենց դիտարկումներում: Այս կապակցությամբ ավելորդ չէր լինի մեջ բերել պրոֆ. Ա. Ա. Նիկոնովի խոսքերը. «Նոր ազդյունների շրջանառության մեջ ներմտնելը ստիպում է վերանայել երկրաշարժաբանության (սեյսմոլոգիայի) մեջ ընդունված շատ պատկերացումներ»: Առաքել Դավրիժեցու նկարագրությունը «վերջնականապես վերացնում է ընդդիմախոսի առարկությունների մեծ մասը և վերահաստատում 1668 թ. հունվարի 14-ի առավոտյան Հարավային Կովկասում տեղի ունեցած երկրաշարժի բացառիկ բնույթը»:

Այսպիսով, Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը, որով ստուգվել ու ճշգրտվել են օտար ազդյունների բազմաթիվ տվյալներ, այժմ օգտակար է դառնում նաև այս տասարեզում:

Մոսկվայի սեյսմոլոգների նախաձեռնած աշխատանքն ունի նաև գործնական նշանակություն, քանի որ գիտական շրջանառության մեջ դնելով նոր ազդյուններ, հնարավորություն է ստեղծում ճշգրտելու որոշ երկրաշարժերի և նրանց հաջորդող ցնցումների (աֆտերշոկերի) տարեթվերն ու ամսաթվերը, տալու նրանց բնութագիրը: Իսկ դա իր հերթին հնարավորություն է ստեղծում փերանայելու հատուկ մասնագիտական կատալոգներում եղած անորոշություններն ու հակասությունները, թույլ է տալիս սկսել սեյսմիկական շրջանացման և պոտենցիալ սեյսմիկական վտանգի գնահատման գործը: Հայտնի է, որ սեյսմիկական, երկրաբանական և երկրաֆիզիկական տվյալների քննությունը թույլ է տալիս կանխապես որոշել այն մարզերը, որտեղ ապագայում պետք է սպասել երկրաշարժ, ավելին՝ կանխատեսել նաև երկրաշարժի առավելագույն ուժը: Այս առումով մեր ազդյունները ձեռք են բերում մասամբ նաև գործնական նշանակություն:

Ամիրաս Երզնկացու այս փոքր ժամանակագրությունը ևս կարժանանա սեյսմոլոգների ուշադրությանը, թեև ուղև այն պատճառով, որ նրանում պահպանված են հազվագյուտ տեղեկություններ միևնույն քաղաքում մոտ 549 տարվա (1045—1584) ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերի մասին:

НОВАЯ ХРОНИКА, ПОСВЯЩЕННАЯ ЗЕМЛЕТРЯСЕНИЯМ

ЛЕНА ХАНЛАРЯН

Резюме

Известный армянский книжник XVII в. Амирас Ерзынкаци повествует о землетрясениях, происшедших в его родном городе с 1045 по 1584 гг. Армянские источники о землетрясениях, хотя и были предметом пристального внимания сейсмологов, долго оставались недоступными широким кругам специалистов. В последние годы в связи с выходом в свет армянских исторических памятников на русском языке этот пробел стал восполняться. Именно на этой основе начался пересмотр и уточнение дат некоторых землетрясений, дополнение специальных каталогов землетрясений на территории СССР, устранение вкраившихся в них неопределенностей и противоречий. Поскольку известно, что анализ сейсмических, геологических и геофизических данных позволяет заранее предусмотреть районы ожидаемых землетрясений, их максимальную силу и, возможно, прогнозировать их, введение в научный оборот новых материалов, почерпнутых из армянских источников, открывает возможности к работам по сейсмическому районированию и оценке потенциальной сейсмической опасности отдельных зон.